ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"15" հոկտեմբերի 2026թ. N 52-Ա

ՀՐԱՄԱՆ

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԵՆԵՋԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 19-ի N 1482-Ն որոշման N 2 հավելվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայկ Արտակի Մկրտչյանի կողմից ներկայացված դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայկ Արտակի Մկրտչյանին (անձնագիր՝ N AO 0396738, տրված՝ 06.11.2025թ. 008-ի կողմից) տրամադրել ավտոմոբիլային տրանսպորտով միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեությունը կազմակերպող փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորման վկայական 5 տարի ժամկետով:

2. Ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետին՝ սույն հրամանը ստորագրվելուց հետո 3

աշխատանքային օրվա ընթացքում ապահովել սահմանված կարգով հրամանի և վկայականի տրամադրումը դիմումատուին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

15.01.2026

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: SIMONYAN ARMEN 4003890647 **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

ք. Երևան